Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 448 - Ա
որոշման

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑՄԱՆ ԿԱՆԽՄԱՆ (LDN) ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ԴԵԳՐԱԴԱՑՎԱԾ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի հողերի դեգրադացման կանխման նպատակների իրագործմանն ուղղված ազգային ջանքերին՝ դեգրադացված մարգագետինների կայուն կառավարման և վերականգնման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
4.	Ծրագիրը կատարողը	Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ (քաղաք Երևան, Տիգրան Մեծի պողոտա 65ա, ՀՎՀՀ՝ 01573524)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի և Լոռու մարզեր, շրջակա միջավայրի պահպանություն
6.	Ծրագրի բյուջեն	343,239,700 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան և Լոռու մարզի Թումանյան խոշորացված համայնքներ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հուլիսի 13-ից մինչև 2027 թվականի սեպտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջև 16.09.2022 թ. կնքված դրամաշնորհի պայմանագրին կից ծրագրի երկարացման վերաբերյալ համաձայնագրի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 13-ի մինչև 2027 թվականի սեպտեմբերի 30-ը ֆինանսավորվող 343,239,700 դրամ, այդ թվում՝ 1) ծառայությունների ձեռքբերում – 79,566,400 դրամ. 2) ապրանքների ձեռքբերում (կամ ներմուծում) – 182,857,700 դրամ. 3) գրասենյակային ծախսեր – 1,176,900 դրամ. 4) աշխատողների վարձատրություն – 62,498,600 դրամ. 5) գործուղման ծախսեր – 17,140,100 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի ազատում) – 79,566,400 դրամ, այդ թվում՝ ա. միջազգային փորձագետներ (2026-2027 թթ.) – 16,441,900 դրամ. բ. թարգմանչական ծառայություններ (2026-2027 թթ.) – 1,574,100 դրամ. գ. ծրագրի տարածքում հողերի կայուն կառավարման և դեգրադացիայի ծախսերի գնահատում (2026-2027 թթ.) – 6,044,700 դրամ. դ. մոնիթորինգային համակարգի հիմնում (2026-2027 թթ.) – 6,040,600 դրամ. ե. ՋԼՄ-ների ներգրավման քարոզարշավի իրականացման և տեղեկատվական նյութերի կազմման ծառայություններ (2026-2027 թթ.) – 4,389,100 դրամ. զ. սեմինարների, քննարկումների, աշխատաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման ծառայություններ (2026-2027 թթ.) – 9,771,800 դրամ.

		է. հիմնական որոշում կայացնողների և պրակտիկ աշխատողների համար հողերի դեգրադացիայի չեզոքացման վերաբերյալ կարողությունների զարգացման ազգային ծրագրի մշակում և իրականացում (2026-2027 թթ.) – 35,304,200 դրամ, 2) ապրանքների ձեռքբերում (կամ ներմուծում) – 182,857,700 դրամ, այդ թվում՝ ա. սերմեր և տնկիներ (2026 թ.-2027 թ.) – 12,911,600 դրամ. բ. արոտավայրերի կայուն կառավարման գործառույթների իրականացման սարքեր (2026 թ.-2027 թ.) – 53,492,500 դրամ. գ. գովազդային վահանակներ (2026 թ.-2027 թ.) – 965,800 դրամ. դ. արժեշղթաների զարգացման ապրանքների ձեռքբերում (2026 թ.-2027 թ.) – 80,316,100 դրամ. ե. երկրատեղեկատվական համակարգի արտոնագրերի ձեռքբերում (2026 թ.-2027 թ.) – 8,712,400 դրամ. զ. արոտավայրերի կառավարման գործիքների ձեռքբերում (2026 թ.-2027 թ.) – 26,459,300 դրամ, 3) գործուղման ծախսեր – միջազգային և տեղական գործուղումներ (2026 թ.-2027 թ.) – 17,140,100 դրամ, 4) գրասենյակային ծախսեր (2026-2027 թթ.) - 1,176,900 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1) Կազմակերպական ծախսեր – 62,498,600 դրամ՝ ա. ծրագիրը իրականացնող աշխատողների վարձատրություն – 62,498,600 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության	Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին և Շրջակա միջավայրի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված

	մեխանիզմների նկարագրությունը	բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

28.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ